

Աճի գլխավոր նախապայմանը արտադրողականության աճն է

Արդի տնտեսագիտական միտքը զբաղված է այնպիսի ուղիների որոնմամբ, որոնք առավելագույնս կնպաստեն աղքատ երկրների առաջանցիկ զարգացմանը՝ զարգացման նախապայմանների բացահայտմամբ:

Համաձայն համընդհանուր տարածում ստացած մեկնաբանության՝ զարգացման նախապայմանը անընդհատ աճի ուղիների բացահայտումն է: Այս առումով «աճ» բառի իմաստը, ըստ էության, յուրաքանչյուր մարդու բարեկեցության բարձրացումն է, իսկ կյանքի միջին մակարդակը բարձրացնելու կարելու նախապայմանը ապրանքների և ծառայությունների արտադրության և սպառման ծավալների ավելացումն է [1]: Որպես այդպիսի ինդիկատոր դիտարկվում է արտադրողականության գործոնը: Տնտեսագիտական գրականության մեջ ներկայումս առաջարկվում են բազմազան ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս տարբեր մեթոդներով գնահատել արտադրողականությունը: Սակայն հիմնականում այդ ցուցանիշներն անչլում են մեկ աշխատողի ստեղծած արդյունքի քանակական գնահատականին:

«Չարգացում - աճ - բարեկեցություն - արտադրողականություն» պատճառահետեանքային կապի համատեքստում զարգացման նախապայմանը արտադրողականության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրագործումն է:

Տնտեսական պատմությունը, որպես մարդկության զարգացման գնահատման ինդիկատոր, կենտրոնում դիտարկելով հենց արտադրողականության գործոնը և մարդկության անցած պատմությունը սեզմենտավորելով ըստ զարգացման մակարդակի, առանձնացնում է մինչարդյունաբերական, արդյունաբերական և հետարդյունաբերական ժամանակաշրջանները:

Արդյունաբերական ժամանակաշրջանի մեկնարկը համարվում է անգլիական արդյունաբերական հեղաշրջումը, որն իրականացվել է, ինչպես ընդունված է համարել, 19-րդ դարի սկզբին: Այս փուլում քաղաքականության կենտրոնում դրվեց արտադրողականության գործոնը՝ որպես երկարաժամկետ տնտեսական աճի՝ միակ նախապայման, իսկ դրա բարձրացման միջոցը դարձավ կապիտալի կուտակումը: 1950-ականներին (համաշխարհային պատերազմից հետո) առաջ եկավ տնտեսական մտքի պատմության հետոպասական դպրոցը, որը հիմնավորեց, որ անընդհատ աճի նախապայմանը ոչ թե շահագործվող ռեսուրսների քանակական ավելացումն է, այլ գոյություն ունի մեկ այլ, եկզոգեն գործոն, որի անընդհատ աճն էլ բերում է տնտեսական աճի: Դա տեխնոլոգիական գործոնն է կամ գիտատեխնիկական առաջընթացը (այսուհետ՝ ԳՏԱ): Նշենք, որ եթե մինչ այդ տնտեսության մեջ ստեղծված արդյունքը, օրինակ՝ ՀՆԱ-ն, երկգործոն ֆունկցիա էր՝ կախված ֆիզիկական կապիտալի և աշխատողների թվից, այժմ այն նաեւ կախված է երրորդ՝ ԳՏԱ-ի մակարդակի արտահայտող փոփոխականից, որի աճն էլ արտադրողականության բարձրացման նախապայմանն է և,

հետեւաբար, անընդհատ, կայուն, երկարաժամկետ ու որակյալ տնտեսական աճի հիմքն ապագայում:

Աճի մոդելներում ԳՏԱ-ի գնահատման նպատակով հետազոտողները ներդրել են արտադրական ֆունկցիաների գործիքը, իսկ որպես մեկնարկային ընդունված է դիտարկել Նոբելյան մրցանակակիր Ռոբերտ Սոլովի մոդելը (1956):

$$Y_t = f(K_t^\alpha, L_t^\beta, A_t)$$

որտեղ Y-ը արդյունքն է, K-ն՝ ֆիզիկական կապիտալը, L-ը՝ աշխատուժը, $\alpha > 0$, $\beta > 0$ արտադրական ֆունկցիայի պարամետրերն են, A-ն՝ ԳՏԱ-ի մակարդակը:

Ըստ Սոլովի՝ էմպիրիկ կյուրթ վերլուծման միջոցով կատարած գնահատականների, ԱՄՆ տնտեսության մեջ բնակչության մեկ շնչի հաշվով ստեղծված ՀՆԱ-ն ամերիկյան մասնավոր ոչ ֆերմերային տնտեսության մեջ աճել է երկու անգամ՝ 1909-1949թթ. ընթացքում: Ընդ որում՝ աճի 87.5%-ը պայմանավորված էր հենց տեխնոլոգիական փոփոխություններով (առաջընթացով), իսկ մնացած 13.5%-ը՝ օգտագործվող կապիտալի ծավալների ավելացմամբ [2]: Նկատենք, որ Սոլովի հետազոտած ժամանակաշրջանը վերաբերում էր ամերիկյան արդյունաբերական տնտեսության ծաղկմանը, որը, փաստորեն, բնութագրվեց տեխնոլոգիական անընդհատ առաջընթացով, և որի արդյունքում էլ առկա էր անընդհատ տնտեսական աճը:

Հաջորդ ժամանակաշրջանը, որը ներկայումս առանձնացնում են հետազոտողները, 1990-ականներից մեկնարկած տեղեկատվական գլոբալացման կամ հետարդյունաբերական ժամանակաշրջանն է: Տեղեկատվական՝ քանի որ տնտեսության ազենտների (ազգ, տարածաշրջան կամ ձեռնարկություն) կամ արտադրության գործոնների արտադրողականությունը և, հետեւաբար, մրցունակությունը առաջնայնորեն կապված են տեղեկատվության հավաքագրման, մշակման և արդյունավետ օգտագործման հետ, ինչն էլ իր հերթին հիմնված է գիտելիքի վրա: Գլոբալ՝ քանի որ արտադրական գործունեության հիմնական մաս կազմող կապիտալը, աշխատանքը, հումքը, կառավարումը, տեխնոլոգիան, տեղեկատվությունը, շուկաները և այլն ձեռավորվում են գլոբալ ծավալներում: Իսկ տեղեկատվական գլոբալացումը ենթադրում է, որ նորագույն ժամանակաշրջանում արտադրողականության մրցակցային որոշակի մակարդակի հասնելու համար անհրաժեշտ է ինտեգրվել գլոբալ փոխկապակցված համակարգին՝ կազմելով դրա մի մասը [3]:

Ըստ Մանուել Կաստելի՝ հետարդյունաբերականության դասական տեսությունը միավորում է հետեւյալ երեք պնդումները.

- Արտադրողականության և աճի աղբյուրը գիտելիքն է, որը տեղեկատվության մշակման միջոցով տարածվում է տնտեսական գործունեության բոլոր ասպեկտների վրա:
- Տնտեսական գործունեությունն իր հերթին ապրանքների արտադրության ուղղությամբ կենտրոնացումից տեղափոխվում է ծառայությունների մատուցման ոլորտ: Գյուղատնտեսության մեջ զբաղվածության կրճատմանը, որն առավել բնորոշ էր արդյունա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԱՐԴԻ ԶԱՐԳԱՋՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Գործոնային արտադրողականությունը տնտեսական աճի կարգավորման գործընթացում

Գիտական ղեկավար՝
Հայկ ՍԱՐԳՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Քրիստինե ԱՆՏՈՆՅԱՆ
ԵՊՀ
տնտեսագիտության ֆակուլտետի
ասպիրանտ



բերական ժամանակաշրջանին, այժմ հետևում է արդյունաբերության մեջ աշխատատեղերի կրճատումը՝ դառնալով տնտեսության զարգացման մակարդակի գնահատման որոշակի ինդիկատոր:

● տնտեսության մեջ աճում է այն մասնագիտությունների կշռակառուցումը, որոնք առավելապես ներկայացնում են տեղեկատվությունն ու գիտելիքը, որոնք էլ միտված են դառնալ նոր հասարակության «միջուկը»:

Հետարդյունաբերայնության տեսությունն իր սահմանմամբ հիմնվում է Սոլոուի հետազոտությունների վրա: Այսպես, երբ զարգացած երկրներում զբաղվածությունն արդյունաբերության մեջ հասավ հնարավոր բարձր մակարդակին, արտադրողականության աճը գիտելիքի հիման վրա դարձավ արդյունաբերական տնտեսության սահմանագիծը: Այստեղ էլ տեղի է ունենում անցում արդյունաբերական տնտեսություններից հետարդյունաբերականի, որի հիմքում ընկած է արտադրողականության՝ նոր թափով և որակով առաջանցիկ աճը՝ հիմնված գիտելիքի կուտակման կամ արդեն մարդկային և ոչ թե ֆիզիկական կապիտալի վրա, ինչն էլ որպես հետևանք հանգեցնում է ՀՆԱ-ում կուտակման և ոչ կուտակման ապրանքների արտադրության հարաբերակցության փոփոխման:

Այս իմաստով բնական կարելի էր համարել տնտեսագիտության տեսության մեջ աճի մոդելներում մարդկային կապիտալի գործոնի ներմուծումը: Առավել լայն ճանաչում է ստացել Լուկասի, Ռոմերի, Մենքյու-Ռոմեր-Վեյլի համատեղ հետազոտությունը (Mankiw, Romer, Weil (1992)): Վերջինները, մասնավորապես, մարդկային կապիտալը ներմուծեցին Սոլոուի աճի մոդելում, ֆիզիկական կապիտալի և աշխատուժի գործոնների հետ զուգահեռաբար՝ որպես առանձին գործոն, դիտարկելով էկզոգեն աճի մոդելը, որտեղ մարդկային կապիտալի կուտակումը ամբողջությամբ նման է ֆիզիկական կապիտալի կուտակմանը:

$$Y_t = K_t^\alpha H_t^\beta [A_t L_t]^{1-\alpha-\beta}$$

որտեղ Y_t -ը արդյունքն է, K_t -ն՝ ֆիզիկական կապիտալը, H_t -ը՝ մարդկային կապիտալը, L_t -ը՝ աշխատուժը, $\alpha > 0$, $\beta > 0$, $(\alpha + \beta) < 1$ ՝ արտադրական ֆունկցիայի պարամետրերն են:

Նորագույն տեխնոլոգիաների համար ֆունդամենտալ հիմք ծառայեցին 1970-ականների վերջերին և 1980-ականներին առաջ անցած, իսկ 1990-ականների կեսերից լայն տարածում ստացած տեղեկատվական տրոպիկան համակարգերը՝ ձեռնարկելով այսպես կոչված ցանցային հասարակությունը: Ուրվագծվում է տեխնոլոգիա - մշակույթ - հասարակություն փոխկապակցված հանգույցը, որի դիմամիկան հետաքրքրական է դառնում ապագայի զարգացման մեջ մեր երկրի այսօրվա դիրքավորման համար:

ԽՍՀՄ-ի արդյունաբերական տնտեսությունը

1922-ից լինելով ԽՍՀՄ կազմում՝ Խորհրդային Հայաստանը ամբողջապես հիմնվում էր մարքսիզմի-լենինիզմի գաղափարախոսության վրա: Կազմելով աշխարհի ցամաքի 1/6-րդը և լինելով բազմամշակույթ ու բազմակրոն եթևիկ հանգույցների միավորող՝ Խորհրդային Միությունն արձանագրում էր տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր, քան Արեւմուտքը, իսկ արդյունաբերայնացման տեմպերը ամբողջ աշխարհում ամենաարագն էին: Թերեւս հետաքրքրական է նաեւ այն հանգամանքը, որ արդյունաբերայնացման ծաղկման շրջանի սկիզբը համընկնում է ԽՍՀՄ ձեռնարկման, իսկ ավարտը՝ փլուզման հետ:

Չնայած ԽՍՀՄ ստեղծման եւ գոյության սկզբնական ժամանակաշրջանը բնութագրվում էր պատերազմի, հեղափոխության, սովի հետեւանքներով միլիոնավոր մարդկանց մահացումով, սպանություններով և քաղաքներով, քաղաքական ազատության եւ մարդկանց իրավունքների պարբերական ոտնահարումներով, ազգային մշակույթների, ավանդույթների, պատմությունների վերացմամբ, միջազգային մեկուսացմամբ, այնուամենայնիվ նախկին աղքատ երկիր ԽՍՀՄ-ը ընդամենը երկու տասնամյակի ընթացքում կարողացավ բավականաչափ զարգանալ՝ ստեղծելով արդյունաբերական տնտեսություն և որոշակիորեն միատարր հասարակություն՝ միավորված մեկ գաղափարի շուրջ:

Պետական տնտեսական քաղաքականության հիմքում դրվեց հնգամյա պլանի գաղափարը, որն իրականացվում էր կենտրոնացված պլանային համակարգով՝ պետականի ինստիտուտի շրջանակներում, եւ որի իմաստը պատերազմից հետո տնտեսության վերականգնման եւ զարգացման նպատակով պետական պլանների մշակումն ու իրագործումն էր՝ մոտ 200 հազար անուն ապրանք-

ների եւ ծառայությունների գծով: Իսկ արդյունաբերայնացումը կատարվում էր արեւմտյան երկրներին բնորոշ տնտեսական աճի նույն մոդելով, երկու գործոնների՝ հիմնական ֆոնդերի (ներառյալ երկրի բնական ռեսուրսների) եւ աշխատանքային ռեսուրսների (աշխատուժի) մոբիլիզացմամբ: Սակայն, ըստ տարածված կարծիքի, երրորդ՝ տեխնոլոգիական առաջընթացի գործոնը երկրորդական էր համարվում, որի հետեւանքով եւ խորհրդային տնտեսական աճը կրեց առավելապես էքստենսիվ բնույթ, այն է՝ աճը ապահովվեց ի հաշիվ օգտագործվող ռեսուրսների ծավալի տարեցտարի ավելացման կամ դրանց արդյունավետ մոբիլիզացման նպատակային քաղաքականության: Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկրի՝ բնական պաշարներով հարուստ լինելու հանգամանքը մի կողմից, եւ մարդկանց՝ հիմնականում գյուղատնտեսությունից արդյունաբերության ոլորտ տեղափոխելու ակտիվ քաղաքականությունը՝ մյուս կողմից, սկզբնական շրջանում ԽՍՀՄ-ը առաջանցիկ տեմպով արդյունաբերականացվում էր:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ը արդյունաբերականացման տարիներին գլխավորապես կենտրոնացել էր ռեսուրսների արդյունահանման և արտահանման մեջ², իսկ վերջինս էլ իր հերթին հավասարակշռվում էր տեխնոլոգիաների եւ պատրաստի արդյունաբերական արտադրանքների, ներառյալ՝ սպառման ապրանքների ներկրմամբ: Փոխարենը՝ խորհրդային տնտեսության կենտրոնական կամ այսպես կոչված «սեւ անցքի» դերը ստանձնել էր ռազմարդյունաբերության ոլորտը: Այն ներծնում էր պատրաստի արդյունաբերականության զգալի մասը: «Վերջին հաշվով տնտեսության միլիտարիզացիան այդ համակարգի տրամաբանական բաղկացուցիչն էր, որը բացարձակ առավելություն էր տալիս պետական իշխանությանը՝ հանուն պետական իշխանության: Ազդարային, թույլ զարգացած պետությունը, ինչպիսին էր Խորհրդային Միությունը դարձանքսին, 30 տարվա ընթացքում կարողացավ դառնալ ամենախոշոր ռազմական տեղություններից մեկը: Սակայն հետազոտողների լայն շրջանակներում տարածված կարծիք է, որ հենց ռազմական համալիրը, լինելով տնտեսության նպատակային եւ առաջնային լրջագույն հանգույց-բաղկացուցիչը, նպաստեց արդյունաբերական տնտեսության զարգացման ճանապարհին արտադրողականության աճի տեմպերի դանդաղեցմանը, իսկ այնուհետ՝ անկմանը»:

Այսպիսով՝ հենց այն պահին, երբ զարգացած կապիտալիստական երկրները մխրճվում էին տեխնոլոգիական հիմնարար փոխակերպման փուլ՝ դրսեւորելով արտադրողականության գործոնի դրական կարգի նոր աճ (սկսած 70-ականներից, զարգացում ապրած 80-ականներին եւ վերջնականապես լայն տարածում ստացած 90-ականներից), ԽՍՀՄ-ը մխրճվել էր տեխնոլոգիական ճգնաժամի մեջ, որի հիմնական պատճառներն էին բյուրոկրատական համակարգը, պլանային տնտեսության անկատարությունը եւ դրա հետեւանքով դեֆիցիտի անկայունությունն ու լայն տարածումը, տնտեսության հիմնական կորիզ մտավորականության եւ մեծածավալ ռեսուրսների ներգրավումը ռազմարդյունաբերական համալիր եւ այլն: Այս ամենի հետեւանքով ռեսուրսներից հաստատուն փոխհատուցմամբ, էքստենսիվ բնորոշմամբ տնտեսական աճը սկսեց դանդաղել, ապա եւ ընդհատվել: Այդ հիմնախնդիրների լուծման էր ուղղված գորբաչովյան «պերեստրոյկան», որն ավարտվեց ԽՍՀՄ-ի կոլապսով:

Հայաստանի հասարակությունն ու տնտեսությունը փոխակերպման փուլում: Անցում հետարդյունաբերայնացման

1991թ. կազմավորվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո նրա անդամ Նորանկախ հանրապետությունները որդեգրեցին զարգացման շուկայական ուղի: Հասարակությունն ու տնտեսական համակարգերը մխրճվեցին փոխակերպման փուլ: Մինչեւ 1994թ. ընկած ժամանակաշրջանն ընդունված է անվանել անցման վաղ փուլ, դրանից հետո եկողը՝ ուշ: Վաղ անցման փուլին առավելապես բնորոշ է քառույց:

Խորհրդային Միության փլուզումից եւ անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի տնտեսությունը իսր ճգնաժամ ապրեց: 1990-1993թթ. Հայաստանի ճգնաժամն ընդունված է համարել համաշխարհային պատմության մեջ «ամենախոշոր եւ արագընթաց ճգնաժամներից մեկը»⁴, որը բնութագրվեց տարբեր ասպեկտներում միանգամից ի հայտ եկած անբարենպաստ պայմանների անկումով՝ դարաբաղյան հակամարտության մեջ ներգրավում, տրանսպորտային ուղիների շրջափակում, էներգետիկ ճգնաժամ,

Ֆինանսական համակարգերի խախտում, հիպերինֆլացիա, ինչի հետևանքով բնակչության կենսամակարդակը ունեցավ կտրուկ անկում:

1994-ից մեկնարկած բարեփոխումները դրեցին ընդհանուր մակրոտնտեսական, ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ կայուն իմքեր (1995թ. Եներգետիկ ճգնաժամի հաղթահարում, դարաբաղյան հակամարտության մեջ զինվորադարի կնքում, 1994թ. սկսած՝ տրանսպորտային ուղիների ու վառելիքի ներմուծման ուղիների շրջափակման թուլացում) և ապահովեցին հետագա տարիների շարունակական դարձող տնտեսական աճը: Եական նշանակություն ունեցան նաև օտարերկրյա պաշտոնական տրանսֆերտները, որոնք տրվում էին արտոնյալ վարկերի և դրամաշնորհների տեսքով, և ոչ պաշտոնական տրանսֆերտները տեղացիներին՝ արտագաղթի հետեանքով արտասահմանում աշխատող իրենց հարազատների կողմից:

Անդրադառնալով ՀՆԱ-ի կամ տնտեսական աճի դինամիկային՝ կարելի է նկատել, որ 1990-1993թթ. խոր ճգնաժամի տարիներին հաջորդող ընթացքը մինչև 2000թ. վերականգնողական է եղել, սակայն դանդաղ քայլերով: Դրան հաջորդող տարիները բնութագրվել են տնտեսական անսխալի աճով, իսկ 2003-04թթ. արձանագրվել է ՀՆԱ-ի 1990թ. մակարդակը: Միաժամանակ, սակայն, ՀՆԱ-ի աճն ուղեկցվել է մի կողմից՝ եկամուտների բաշխման անհավասարության խորացմամբ⁵, մյուս կողմից՝ գործազրկության մակարդակի շարունակական ավելացմամբ:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ անցյալի տնտեսական զարգացումները բնութագրվել են մի կողմից մակրոտնտեսական կայունության հաստատմամբ, որը դրական նախապայմաններ է ստեղծել տնտեսական աճի համար, սակայն մյուս կողմից վերջինի անբավարարությունը՝ աղքատության հաղթահարման համար:

(1) Սոլովի մոդելի միջոցով կատարելով հաշվարկներ վերափոխումային երկրորդ՝ աճի փուլում գտնվող Հայաստանի տնտեսության համար, գնահատել ենք Սոլովի մնացորդի՝ A-ի փոփոխման տեմպը, որը համեմատաբար կարճաժամկետ հատվածում արտահայտում է տնտեսության մեջ արտադրողականության փոփոխությունը, որն անվանել ենք ընդհանուր գործունային արտադրողականություն⁶: Պարզվել է, որ մեր կողմից կենտրոնական ընտրված այդ ցուցանիշի աճի դինամիկան մինչև 2002թ. դանդաղ աճող է եղել, սակայն պահպանել է իր բացասական արժեքը, այն է՝ արձանագրված աճը էքստենսիվ բնույթ է ունեցել, սակայն դանդաղ վերականգնվող: 2002-ից արձանագրվել է դրա դրական արժեքը, սակայն դեռևս անբավարարությունը՝ 21-րդ դարում գլոբալիզացիոն տեղեկատվական համակարգ ներթափանցած մեր երկրի համար: Ուստի՝ այսօր անհրաժեշտ է իրականացնել նոր բարեփոխումներ՝ ուղղված հենց արտադրողականության գործնի բարձրացմանը, որը կհանգեցնի տեղական արտադրության մրցունակության բարձրացման և ըստ այդմ՝ երկարաժամկետ կայուն տնտեսական աճի:

Եթե պլանային համակարգում արտադրողականությունը ուղղակիորեն կառավարելի էր, քանի որ բոլոր ձեռնարկությունները պետական էին, և հենց պետությունը պլանների միջոցով կատարելով ներդրումներ գործունային մեջ՝ նպաստում էր արտադրողականության բարձրացմանը մի կողմից և մակրո մակարդակներում, ապա շուկայական տնտեսական համակարգում, պետությունը ուղղակիորեն չի կարող կառավարել արտադրողականությունը: Դրա համար անհրաժեշտ է պայմանների ստեղծում:

Ինստիտուցիոնալ համակարգը այն պրիզման է, որի միջով անցնելով՝ ներդրումները հասնում են իրենց նպատակային արդյունքին: Այսինքն՝ այստեղ պետությունը միայն կարող է խրախուսել ներքին և արտաքին ներդրումների իրականացումը, իսկ դրա համար պետք է ունենա ինստիտուցիոնալ որակյալ համակարգ՝ սեփականության իրավունք, առաջարկ-պահանջարկ հարաբերակցությամբ գնագոյացման շուկայական համակարգ, մտավոր սեփականության պաշտպանություն, օրենսդրական վստահելի դաշտ, կոռուպցիայի նվազագույն մակարդակ, որոնք վերջին հաշվով ուղղված են մրցակցային արդար խաղի կանոնների ստեղծմանը և ապահովմանը: Սրանց միջոցով միայն հնարավոր կլինի ապահովել ներդրումներ մարդկային և ֆիզիկական կապիտալների մեջ՝ ապահովելով նրանց կուտակումը, որն էլ ուղղված է հենց արտադրողականության բարձրացմանը և կայուն տնտեսական աճին ապագայում:

Եթե սա միջոցն էր նպատակի իրականացման համար, ապա ո՞րն էր ճանապարհը կամ ուղին՝ այդպիսի աճի միջոցով վստահելի և հաստատուն տեղ ու դեր ունենալու համար տարածաշրջանում և/կամ աշխարհում: Վստահ ենք, որ դրա համար անհրաժեշտ է շեշ-

տը դնել մարդկային կապիտալի գործնի վրա, քանի որ մեր երկիրը ժառանգել է տարածքներ՝ բնական ռեսուրսների աղքատ պաշարներով, «ոչ ցանկալի» հարեաններով շրջապատված, սակայն մյուս կողմից կրթության որակյալ համակարգ, 99%-ով կրթված հասարակություն, իսկ տնտեսության մեջ զբաղվածների շուրջ կեն ունի բարձրագույն կրթություն: Ըստ Ռուբերի, Լուկասի և հետադրույան քերական հասարակարգում հետադասակարգման մյուս հետետրոնների գիտելիքն է այդ հասարակարգում ամենից թանկարժեք ռեսուրսը, իսկ դրա կուտակումը իրականացվում է կրթության համակարգում, որը մարդկային կապիտալի վերարտադրողն է: Այս հետադրողների առաջարկած մոդելներում դա առանձին ոլորտ է՝ սպառման և ապրանքների արտադրության ոլորտներից:

Ունենալով այս ուղղությամբ որակյալ և հարուստ բազա, Հայաստանը կարող է և պետք է դիրքավորվի այսօր աշխարհի գաղազման մեջ՝ ներգրավվելով և մասնակցելով աշխատանքի միջազգային բաժանմանը և մասնագիտացմանը: Հակառակ դեպքում նրան սպառնում է որե՛ն խոշոր տերության կցորդը դառնալու ճակատագիր, որը հղի է հույժ կարեւոր՝ ինքնուրույն կործանման վտանգով, հատկապես գլոբալացման պայմաններում:

1. Այսուհետ «աճ» և «տնտեսական աճ» բառերը կնույնացնենք, քանի որ աճի վերոնշյալ սահմանումը տնտեսագիտության մեջ վերափոխվում է «տնտեսական աճ» հասկացության և գնահատվում երկրների ստեղծած արդյունքի ծավալների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշի գուտ աճով:
2. 1980-ականներին կազմում էին արտահանման 90%-ը:
3. 70-ականներից սկսեց անընդհատ ի հայտ գալ համակարգային անհավասարակշռություն՝ մի կողմից տնտեսության տարբեր ճյուղերի, մյուս կողմից՝ մեծաքանակ ապրանքների նկատմամբ առաջարկի ու պահանջարկի միջև: Իսկ քանի որ դեռևս որոշվում էին վարչական ճանապարհներով և չէին արտահայտում այդ անհավասարակշռությունը, այդպիսի ճեղքվածքն արտահայտվում էր դեֆիցիտի տեսքով: Դեֆիցիտն էլ դարձավ խորհրդային տնտեսության կառուցվածքային բովանդակությունը (4): Սրա դեմ պայքարելու համար համակարգում ձևավորվեց փոխադարձ ծառայությունների մատուցման սխեման, ինչպես օրինակ՝ արտադրողների և մատակարարների, ղեկավար տարբեր օղակների, սպառողների և խանութների միջև, որն աճեց՝ դառնալով սովետային տնտեսություն, ինչն էլ իր հերթին աճեց կուսակցական նոտենկատուրային քոլարկմամբ, ստեղծելով բյուրոկրատական կոշտ համակարգ:
4. Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, հայեցակարգային ծրագիր, մշակվել է UNDP-ի ու ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից, 2003, էջ 6
5. 1996-99թթ. Ձիկի գործակիցը Հայաստանում հասել է 0.59-ի՝ 1987-90թթ. 0.27-ի դիմաց, չնայած վերջին տարիներին այդ գործակիցը դարձյալ դրսևորել է նվազման միտում:
6. Չնայած մեթոդի մանրամասները ներկայացված են՝ K. Антонян, Совокупная факторная производительность как главное условие экономического роста Республики Армения, Государственное управление, Электронный вестник, #12, МГУ, сентябрь 2007, URL/http://e-journal.spa.msu.ru/

Օգտագործված գրականություն

1. Уильям Истерли, В поисках роста, (перевод с английского), Институт комплексных стратегических исследований, Москва 2006.
2. Technical Change and the Aggregate Production Function, Robert M. Solow, The Review of Economics and Statistics, Vol. 39, #3, Aug. 1957, pp. 312-320.
3. Мануель Кастельс, Информационная эпоха: экономика, общество и культура, URL, http://polbu.ru/kastels_informepoch/
4. Кризис индустриального этатизма и коллапс Советского Союза, М. Кастельс, Э. Киселева, Мир России, 1999, #3.
5. Равновесие и экономический рост (Принципы макроэкономического анализа), Пер. с франц., Столерю Л., 1974.
6. Теория экономического роста, Ю.В. Щараев, ВШЭ, 2006.
7. Endogenous Technological Change, Paul M. Romer, University of Chicago, 2004, URL http://www.jstore.org
8. The analysis of the relation between education and economic growth, Marielle Monteils, Group Sup de Co, Montpellier, France, Carfax Publishing, Compare, Vol. 34, #1, March 2004.
9. Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, հայեցակարգային ծրագիր, մշակվել է UNDP-ի ու ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից, 2003
10. Վիճակագրական տարեգրքեր, հրատարակումներ, URL/www.armstat.am